



Ա. ՅԱՏՈՒԿ ՃԱՇԵՐ

1. — Հարսանիք: — Ընտանեկան կե-
նաց այս ամենէն ցնծուն ու շոնգալից
հանդէսն իրեն հետ կը բերէր նաեւ կե-
րակրոց եւ ըմպելեաց մեծ շռայլութիւն
մը: Հոս կը մտնէր բուն իսկ մեզ ծանօթ
խնճոյքը իւր բոլոր չափազանցութեամբ
հանդերձ, զոր չէր կարող Օձնեցին աւելի
լաւ սահմանել՝ քան կոչելով « մարմնա-
կան գեղխութիւն » (24): Ծնորհալին կը
շեշտէ « գինարբութեան եւ ուրախութեան »
անչափ առատութիւնն անոր մէջ . հոն
էին ճշմարիտ « գինեմուրն յարբեցութեան
ըմբռնեալ » (Ընդհ. 42), որոնք յետոյ ի-
րենց անգամալոյծ մարմինները մինչեւ ե-
կեղեցի կը քաշէին հարսանեկան թաբո-
րին ետեւէն (անդ, 41. Յհ. Եզկ. Խր. Մվ.
Եզկ.) եւ որոց մէջ կը փայլէին իրենց լկտի
համարձակութեամբ՝ « անառակ կանայք եւ
արք », որոնք հրաւիրուած էին զուար-
թացնել հարսանիքը (Ընդհ. 42): Այս գի-
ներբութեանց կ'ընկերէին նաեւ պարեր,